ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 8 անդամներ:

Բացակա էին՝ Մանուկ Բաղդասարյանը, Սիրակ Հովակիմյանը, Արամ Հովսեփյանը, Անահիտ Ղազարյանը, Գարեգին Մարգարյանը, Ժորա Մարտիրոսյանը, Արսեն Ստեփանյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Տիգրան Պողոսյանը

Նիստը արձանագրում էր ՝ Լիպարիտ Թադևոսյանը

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով՝ ավագանին որոշում է՝

Հաստատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը

1. Համայնքի ղեկավարի հաղորդումը 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին

2. Հրատապ բաց մրցույթ անցկացնելու մասին

3. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին- ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով, համայնքի ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումըհամայնքի 2023 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին-ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, <<Գնումների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքի Գառնի գյուղում մայթրեի կառուցման, կահավորման, գծանշման ջրահեռացման ոռոգման առուների անցկացման աշքատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման գնման ձևը համաձայն <<Գնումների մասին>> օրենքի համայնքի գնումների պլանով նախատեսվել է բաց մրցույթ, ըստ որի մրցույթի հրավերը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից մինչև պայմանագրի կնքման գործընթացը տևում է շուրջ 2 ամիս և հաշվի առնելով այդ ժամանակահատվածում եղանակային և աշխատանքների տարբերությունը լինելը, համայնքի ավագանին որոշում է

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Գառնի համայնքի Գառնի գյուղում մայթրեի կառուցման, կահավորման, գծանշման ջրահեռացման ոռոգման առուների անցկացման աշխատանքների, ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման գնումը կատարելու հրատապ բաց մրցույթի եղանակով, առաջարկելով նաև գնումների պլանում կատարելու համապատասխան փոփոխություններ:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին- ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻՊԱՐԻՏ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 143-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով քաղաքացի Մայիս Խաչատրյանի դիմումը, համայնքի ավագանին որոշում է.

1.Քաղաքացի Մայիս Վահրամի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի Գառնի գյուղի 07-026-0102-0236 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության 0.75198 հա մակերեսով վարելահող հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ չրանոց, սառնարան, պահեստ կառուցման նպատակով:

2.Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Ավագանու անդամներ

ԱԼԻԿ ԱԼՈՅԱՆ

ԱՐՏՅՈՄ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐՍԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՏԻԳՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ